ԿԱՐԾԻՔ

Թ.00.01- «փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Սոնա Արայի Դավթյանի «Կենսաբարոյագիտությունը որպես միջգիտակարգային գիտելիքի և արժեքանության նոր ձև»** վերնագրով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է բժշկագիտության, կենսաբանության, գենային ինժեներիայի և մարդու կենսաբանական գոյությանն առնչվող մի շարք այլ գիտակարգերի՝ 20-րդ դարի ընթացքում բուռն զարգացման հետևանքով ծագած բարոյական մարտահրավերներին պատասխանելուն ուղղված նոր գիտակարգի՝ կենսաբարոյագիտության խնդիրների ձևակերպման, ուսումնասիրության և նորմավորման անհրաժեշտությամբ: Կենսաբարոյագիտությունը միջգիտակարգային գիտակարգ է, որն ուսումնասիրում է մարդու կենսաբանական գոյությանն առնչվող գիտակարգերի (բժշկագիտություն, կենսաբանություն, գենային ինժեներիա և այլն) և սոցիալական համակեցությունը նորմավորող գիտակարգերի (իրավագիտություն, բարոյագիտություն) խաչավորման տիրույթում գտնվող բարոյական և իրավական խնդիրները: Թեև կենսաբարոյագիտական խնդիրները տեսաբանների ուշադրության կենտրոնում են գտնվում արդեն շուրջ կես դարից ավելի, սակայն մարդկային կյանքին առնչվող գիտակարգերի զարգացումը հընթացս տեղի ունեցող գործընթաց է, ինչը կենսաբարոյագիտությամբ զբաղվող տեսաբանների համար նորանոր ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացման դաշտ է բացում:

Այս համատեքստում արժեքավոր է ատենախոսի կատարած աշխատանքը, որն ուղղված է կենսաբարոյագիտության՝ որպես միջգիտակարգային գիտելիքի ժամանակակից ոլորտի արժեքանական, բարոյական և իրավական խնդիրների ուսումնասիրությանը: Աշխատանքում հանգամանալից նկարագրվել են կենսաբարոյագիտության ծագման, էվոլյուցիայի և զարգացման միտումների առանձնահատկությունները: Վերլուծվել են նաև կենսաբարոյագիտական որոշ խնդիրների՝ էվթանազիայի, հղիության արհեստական ընդհատման և այլ հիմնահարցերի փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները, ձևակերպվել են որոշ նորմատիվ պնդումներ, որոնք վերաբերում են նշված խնդիրների վերաբերյալ բարոյական և իրավական մոտեցումների ճշգրտմանը:

Ատենախոսությունում հիմնավորվել է, որ մարդու կենսաբանական գոյությանն առնչվող նորանոր տեխնոլոգիաների հայտնագործումը և սոցիալական կյանքում կիրառումը ոչ միայն զուտ բժշկագետների, կենսաբանների, դեղագործների և հարակից

ոլորտների գիտնականների խնդիրն է, այլ նաև իրավագետների և բարոյագետների, որոնք կոչված են ուսումնասիրելու հասարակական կյանքի կանոնակարգմանն առնչվող խնդիրները, և ձևակերպելու այդ խնդիրների լուծմանն ուղղված իրավական և բարոյական նորմեր:

Աշխատանքն արժեքավոր է հատկապես հայաստանյան հասարակությունում կենսաբարոյագիտության և կենսաբարոյագիտական խնդիրների վերաբերյալ ակադեմիական և հասարակական խոսույթի ձևավորման և տարածման տեսանկյունից: Թեև ատենախոսության նյութի վերաբերյալ առկա են բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ, բայց ինչպես իրավացիորեն նկատում է ատենախոսության հեղինակը՝ հայաստանյան գիտական և ընդհանրապես հասարակական խոսույթում կենսաբարոյագիտական խնդիրները բավարար կերպով ներկայացված, քննարկված և ուսումնասիրված չեն: Այս առումով սույն ատենախոսության առկայությունը այդ բացը լրացնելուն ուղղված կարևոր քայլ է:

Աշխատանքն աչքի է ընկնում նաև իրավական փաստաթղթերի ուսումնասիրության առատությամբ, ինչը պայմանավորված է հետազոտության առարկայի միջգիտակարգային բովանդակությամբ: Հեղինակը հաջողությամբ է իրականացրել իրավական փաստաթղթերի և բարոյագիտական ուսումնասիրությունների համադրական վերլուծությունը:

Այդուհանդերձ աշխատանքը զերծ չէ մի շարք թերություններից, որոնք կարելի է դասակարգել աշխատանքի բովանդակությանը և մասնավոր պնդումներին վերաբերող, աշխատանքի գրականության ցանկին և հղումներին, ինչպես նաև քերականական ու լեզվառճական խնդիրներին վերաբերող թերությունների խմբերի:

Աշխատանքի բովանդակությանը և մասնավոր պնդումներին վերաբերող թերություններ.

1. Աշխատանքի ներածության «Գիտական նորույթ» բաժնում ներկայացված թեզերից հետևյալը միայն որոշակի վերապահումներով կարելի է գիտական նորույթ համարել.

. «Բացահայտվել են կենսաբարոյագիտության՝ որպես միջգիտակարգային գիտելիքի նոր ոլորտի, առարկայական տիրույթի, հիմնական կատեգորիաների, սկզբունքների առանձնահատկությունները» (էջ 15): Եթե խոսքն ընդհանրապես կենսաբարոյագիտության առանձնահատկությունների մասին է, ապա դրանք արդեն իսկ ներկայացվել են ատենախոսի կողմից մեջբերված հեղինակների՝ Վ. Ռ. Փոթերի,

Խ.Թ.Ինգլհարթդտի և այլոց աշխատություններում: Իսկ եթե բացահայտվել են նոր առանձնահատկություններ, ապա դրանք պետք է նշվեին:

2. Աշխատանքի որոշ պնդումները և այդ պնդումների հիմնավորման համար ներկայացված փաստարկները երբեմն հավելյալ հիմնավորման կարիք ունեն: Կարելի էր խուսափել այդ թերությունից, եթե կոնկրետ պնդումները կամ այդ պնդումների փաստարկման համար ներկայացված հիմնավորումները մեջբերված լինեին որևէ այլ հետազոտություններից, որոնցում ներկայացված պնդումները արդեն իսկ հիմնավորված կլինեին: Ահա այդպիսի մի քանի օրինակ.

. էջ 27. «Ժամանակակից քաղաքակրթությունը շեշտը դնում է ոչ այնքան մարդու հոգեկան աշխարհը կառավարելու, որքան մարդու ցանկությունները վերահսկելու վրա»: Այս պնդումը նախ վիճելի է: Սակայն առավել կարևոր է հասկանալ, թե ինչպես է հեղինակը հանգել այս եզրակացությանը. պարբերությունում բացակայում են ինչպես պնդման հիմնավորումները, այնպես էլ՝ հղումները:

. Էջ 34. «Այսօր, ավելի քան երբևէ, ժողովրդախնայողությունը պետք է դառնա հայ ազգի, Հայաստանի իշխանությունների գերագույն խնդիրն ու առաքելությունը»: Անկախ այն հանգամանքից, թե կհամաձայնենք այս պնդման հետ, թե՝ ոչ, հեղինակը պետք է հիմնավորեր, թե ինչո՞ւ հենց «այսօր, ավելի քան երբևէ» «ժողովրդախնայողությունը պետք է դառնա հայ ազգի... առաքելությունը»:

. Էջ 47. «Պահպանողականության գլխավոր սկզբունքը մարդու կյանքի՝ որպես բացարձակ արժեքի մասին դրույթն է»: Այս պնդմամբ նկարագրվում է պահպանողականության էությունը, սակայն չի հիմնավորվում, թե ինչո՞ւ է այդպես:

. Նույն պարբերությունում հեղինակը կատարում է նաև նորմատիվ պնդում, այն է. «Սակայն պահպանողականությանը ներհատուկ բարոյական դոգմատիզմը չպետք է փոխակերպվի դատարկահնչուն բարոյախոսության, շաղակրատանքի, որը սպանում է իսկապես բարոյականությունը...»: Հետագա շարադրանքում հեղինակը չի հիմնավորում իր նորմատիվ պնդումը, այն է՝ «պահպանողականությանը ներհատուկ բարոյական դոգմատիզմը չպետք է փոխակերպվի դատարկահնչուն բարոյախոսության»: Թեև կարելի է համաձայնել հեղինակի մտքի հետ, բայց գոնե բարոյագիտական վերլուծության ատենախոսական մակարդակում նորմատիվ պնդումները բարոյագիտական հիմնավորումների կարիք ունեն: Չի հիմնավորվում նաև, թե ինչո՞ւ և ինչպե՞ս է «դատարկահնչուն բարոյախոսությունը» «սպանում իսկապես բարոյականությունը», կամ այդ որո՞նք են «իսկական և անիսկական բարոյականությունները»:

. 48-րդ էջում անհիմն է հեղինակի այն պնդումը, թե՝ «ժամանակակից Հայաստանում պահպանողականության աճին նպաստում են մի շարք գործոններ»: Հեղինակն ինքը չի հիմնավորում, թե արդյո՞ք իսկապես ժամանակակից Հայաստանում պահպանողականությունն աճում է, թե՞ ոչ, քանի որ ամենևին էլ ակնհայտ չէ, որ դա այդպես է: Պնդումը չի հիմնավորվում նաև որևէ հետազոտությանը հղմամբ:

. էջ 51. «Թեև հետխորհրդային երկրներում, նաև Հայաստանում շարունակում են պահպանվել կեղծ ազատական արժեքները... Դրանք վարկաբեկում են ազատական արժեքները, խորացնում բարոյահոգևոր ճգնաժամը, որի մեջ հայտնվել է Հայաստանը»: Սա շատ վիճելի պնդում է: Նախ՝ ամենևին էլ ակնհայտ չէ, որ Հայաստանում շարունակում են պահպանվել «կեղծ ազատական արժեքները» և Հայաստանը հայտնվել է «բարոյահոգևոր ճգնաժամի» մեջ, այնուհետև անհասկանալի է, թե հեղինակն ինչպես է սահմանում այդ հասկացությունները, և վերջում՝ հեղինակն ինքը չի հիմնավորում այս պնդումները:

Աշխատանքի գրականության ցանկին և հղումներին վերաբերող թերություններ.

1. Ատենախոսությունում որոշ մեջբերումների դեպքում թեև աղբյուրը նշված է, բայց հղումը բացակայում է, իսկ որոշ մեջբերումների դեպքում անհրաժեշտ հղումներն ուղղակի բացակայում են: Ինչպես օրինակ՝

. էջ 30 - «Ֆիզիկական գործոնները ներառում են «մոր և հոր տարիքը երեխայի ծննդյան պահին...հիգիենիկ միջոցառումները»: Թեև նշված էջի տեքստի բովանդակությունից հասկանալի է ուղղակի խոսքի մեջբերման աղբյուրը, բայց հղումը բացակայում է:

. էջ 31 - «Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության բնորոշման՝ առողջությունը «լիակատար ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարօրության վիճակն է»: Թեև աղբյուրը նշվում է, բայց հղումը բացակայում է:

. էջ 35 – «Անգլիացի ֆիզիկոս և աստվածաբան Արթուր Ռոբերտ Պիկոկը, մատնանշելով ... տալիս է դրա հետևյալ բացատրությունը...»: Թեև մտքի հեղինակը նշված է, բայց հղումը բացակայում է:

. էջ 40 – «Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում 1950-ական և 1970-ական թթ. հայտնի դարձան մարդու վրա գիտափորձերի չարաշահման արտառոց դեպքեր: 1950-ականներին ամերիկյան ռազմական բժիշկները ԱՄՆ-ի փոքր քաղաքաների վրա ցրում էին ռադիոակտիվ աերոզոլներ...»: Պարբերությունում շարունակվում են ԱՄՆ-ին ուղղված մեղադրանքները: Սակայն ասվածը վկայող որևէ հղում բացակայում է պարբերությունում: Մինչդեռ հատկապես որևէ պետության նկատմամբ նման ծանր

մեղադրանքներ հնչեցնելու պարագայում արժանահավատ գիտական հղումներն ուղղակի անհրաժեշտություն են:

. էջ 41 – «Անդրադառնալով այդ հարցին Ի.Տ. Ֆրոլովը և Բ.Գ.Յուդինը ընդգծել են «ավելի խիստ սոցիալական և բարոյական անհրաժեշտությունը՝ այդ սկզբունքների պաշպանության հարցում»: Ուղղակի խոսքի մեջբերման հեղինակները թեև նշվում են, բայց հղումը բացակայում է:

2. Աշխատանքի որոշ հիմնարար հասկացությունների սահմանումները և բնութագրությունները մեջբերվել են այնպիսի աշխատանքներից, որոնք թեև կրթական կամ ճանաչողական տեսանկյունից արժեքավոր աշխատանքներ են, բայց որևէ կերպ կոնկրետ հասկացությունների ուսումնասիրությունների վերաբերյալ հիմնարար աշխատանքներ չեն հանդիսանում: Օրինակ.

. «արժեք» հասկացության սահմանման համար հղվել է ուսումնաօժանդակ ձեռնարկի (էջ 28),

. «էվթանազիա» հասկացության բնութագրման համար մեջբերում է կատարվել բարոյագետ-փիլիսոփաներ Ա. Հուսեյնովի և Ռ.Ապրեսյանի հեղինակած «Էթիկա» դասագրքից (էջ 112),

. «պալիատիվ բժշկություն» հասկացության բնութագրության համար նույնպես հղում է կատարվել դասագրքի (էջ 117):

3. Թեև ատենախոսական գիտական աշխատանքների համար ամենևին էլ անհրաժեշտ չէ, որ ատենախոսության խնդրի վերաբերյալ բոլոր աշխատանքները ուսումնասիրվեն և անդրադարձ կատարվի խնդրի վերաբերյալ աշխատանքներ ունեցող բոլոր հեղինակներին, այդուհանդերձ հետազոտական աշխատանքը կշահեր, եթե ատենախոսության գրականության ցանկում ներառվեին նաև ավստրալացի բարոյագետ Փիթեր Զինգերի, ամերիկացի փիլիսոփա Մայքլ Սենդլի, ճապոնացի փիլիսոփա Մասահիրո Մորիոկայի և շատ այլոց կենսաբարոյագիտական արժեքավոր աշխատանքները:

4. Ատենախոսությունում որպես գիտական գրականության սկզբնաղբյուրներ են նշվել մի շարք դասագրքեր և ձեռնարկներ, ինչպես օրինակ՝

Դավթյան Ս.Հ., Բիոէթիկա: Դասագիրք, Երևան, 2009, 208 էջ,

Կարապետյան Հ., Վ. Տեր-Մինասյան, Խ. Գասպարյան, Պալիատիվ խնամք: Բժշկահոգեբանական մեթոդական ուղեցույց, 2011, 128 էջ,

Հրաչ սրկ. Սարկիսյան, Վարդան սրկ. Ասլանյան, Կենսաէթիկայի հիմնահարցեր: Ուսումնաօժանդակ ձեռնարկ, Սբ. Էջմիածին, 2015, 224 էջ,

Гусейнов А.А., Апресян Р.Г., Этика, Учебник, М., "Гардарики", 2000, 472 с.

Киселев В.А., Биоэтический словарь, Учебное пособие, 2-е изд. исп. и доп., Екатеринбург, "УГМА", 2006, 152 с.,

Davtyan S.H., Bioethics, Handout. Yerevan, "Yerevan State Medical University", 2013, 189 p.

Եվ այլն...

5. Ատենախոսությունում օգտագործվել է հղման «շարունակական համարակալման» ոճը: Շարունակական համարակալման հղման դեպքում բուն տեքստում կիրառվում է վերտողային համարակալում, որը կապակցված է տողատակային կամ տեքստի վերջում տրվող աղբյուրագիտական գրառման հետ: Այս հղման ոճի համաձայն՝ ուրիշի ուղղակի խոսքը մեջբերելիս՝ տեքստի տողատակում նշվող աղբյուրը սկսվում է մեջբերվող մտքի հեղինակի անվանմամբ, իսկ անուղղակի խոսքի մեջբերման դեպքում՝ «Տե՛ս» կամ «Առավել մանրամասն տե՛ս» արտահայտություններով: Ատենախոսը հետևողականորեն չի պահպանել այս կանոնը:

Աշխատանքի քերականական ու լեզվաոճական խնդիրներին վերաբերող թերություններ.

1. Գիտական-ակադեմիական աշխատանքներին ավանդաբար բնորոշ չէ հուզական ոճը: Մինչդեռ աշխատանքում երբեմն հանդիպում են առավելապես հուզական պնդումների մի շարք օրինակներ, ինչպիսիք են.

. Էջ 28. «Նման գործապաշտական, զուտ տեխնոկրատական մոտեցումը բնավ չի ջերմացնում մարդկային հոգին, այն խորթ է կյանքի իմաստի որոնումներին: Այն ուղղված է աշխարհը փոխելուն, բայց անզոր է փոխելու սեփական մարդկային հոգին, հոգեկան աշխարհը»:

. Էջ 39. «Բարոյական և հուզական ընտրությունը, որը մենք պետք է կատարենք առաջիկա տասնամյակներում, իրապես կարող է մարդուն խելագարության հասցնել»:

. Էջ 39. «Վերջապես մենք պետք է կարողանանք գիտակցել և հասկանալ, որ չարիքը թաքնված է ոչ այնքան գիտական և տեխնոլոգիական հայտնագործությունների, որքան հենց մարդու մեջ, ով այնքան հակասական է, որ

հաճախ դժվար է որոշել, թե ով է մարդը՝ արարչության պսա՞կ, թե՞ աշխարհստեղծման առեղծված»:

. էջ 81. «Ոչ մի հոչակագիր, ոչ մի հայեցակարգ չի կարող մարդու մեջ գթասրտության արհեստական ներարկում կատարել: Բժշկական օգնություն կարող են ցույց տալ միայն մարդասեր և ազգանվեր բժիշկները, դեղագետները, իսկ ցուցաբերել գթասրտություն -կարող է մեզանից յուրաքանչյուրը, բայց շատ քչերն են դրա համար ուժ և ժամանակ գտնում»:

2. Աշխատանքում առկա են համակարգչային շարվածքի և քերականական բնույթի մի շարք վրիպակներ:

Այնուամենայնիվ, նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքավորությունը: Հատուկ պետք է շեշտադրել, որ ատենախոսությունը հատկապես արժեքավոր է հայաստանյան գիտական խոսույթում կենսաբարոյագիտական խնդիրների քննարկման դաշտ ձևավորելու համատեքստում: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակումներում և ատենախոսության սեղմագրում:

Սոնա Արայի Դավթյանի «Կենսաբարոյագիտությունը որպես միջգիտակարգային գիտելիքի և արժեբանության նոր ձև» ատենախոսությունը համապատասխանում է գիտության թեկնածուի աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող՝ Թ.00.01 - «փիլիսոփայություն» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Լևոն Գառնիկի Բաբաջանյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

22.03.2023թ.

Լ.Գ.Բաբաջանյանի

ստորագրությունը հաստատում եմ

Երևանի պետական համալսարանի

գիտական քարտուղար Մ. Հովհաննիսյան